

կը դնէ պանդոկապետին առջեւ, խնդրելով որ Աշխարոյի դիւղերը կարգաւ շարէ «Իրբեւ զքարինս տամայի. քար մի դնէր ի դետնի այրն՝ եւ կոչէր զանուն գեղջն, եւ կուշտ կուշտ ի բիր ականս հայէր, թէ զի՞նչ արդիւնս ծնանիցին կասկածանք նորա յերեսաց իմոց. զերեք-տասան խճիցն շարեաց եւ այլ եւս վեց եւ եկաց զանգէտ լինելն այլոց պատճառեալ»⁷⁰:

Կ'անցնի Կիւմիւշխանէ, կ'ուղէ նոյն կերպով ձեռք ձգել Մաչու-դայի դիւղերու անունները, հոն ալ զինքը լրտես կարծելով կը դըժ-ուարին պատասխանել. յանկարծ հայ մը ոտքի ելլելով «շուրջ զվայ-րօքն յածեցեալ զաչսն՝ զի մի՛ ոք ի տաճկաց դտցի անդ... ասէ. զոր ինչ լինելոց է թող լիցի, յուսամ ի Տէր զի ի ձեռն սոցա լինելոց է փրկութիւն աշխարհիս մերում, վասն որոյ ասեմ աներկիւղ»⁷¹, ու կը թուարկէ 48 դիւղերու անուններ⁷²:

(Շար. 1)

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

70. Անդ:

71. Անդ:

72. Հմմտ. Տեղագրութիւնք, էջ 66-87:

ՎԵՐԼՈՒԾՈՒՄԻ ՓՈՐՁ ՄԸ

Պ. ԴՈՒՐԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Գործերու վերլուծական այս փորձը քատերակամներով է որ կ'ու-ղենք սկսիլ. նախ՝ որովհետեւ Դուրեանն ալ ամէնէն առաջ քատերա-գիր բանաստեղծ մը յայտնուեցաւ կեանքին մէջ եւ յետոյ քնարեր-գակ մը, եւ երկրորդ՝ որովհետեւ իր գործին ամէնէն առկար կողմը կը կազմեն ատոնք, սկզբնաւորութիւն մը դրական կեանքի՝ որուն աւարտն եղան Քնարերգութիւններն ու Նամակները, ուր փնտռելու ենք հարազատ Դուրեանը:

1. ՏԱՐԱԳԻՐ Ի ՍԻՊԵՐԻԱ

Առաջինը՝ ժամանակագրական կարգի վրայ, Տարագիր ի Սիպե-րիան է, կոչուած հեղինակէն «Ողբերգութիւն ի մի արարուած»:
Մինչեւ 1959ի «Սիպիւք»ի յայտնութիւնը՝ անծանօթ մնացած էր կը-տորը. փառք Սիմոնեանին՝ որ պրպտեց, դտաւ եւ յայտնեց զայն: Կրնանք վստահօրէն ընդունիլ թէ այդ գործը Դուրեանինն է: Բայց կը ծագի իսկոյն տարակոյս մը. եթէ իրն է, ինչո՞ւ ոչ մէկ տեղ յիշատակուած է, ոչ իրմէ, ոչ առաջին հրատարակիչներէն եւ ոչ իսկ յիշատակուած է, ոչ իրմէ, ոչ առաջին հրատարակիչներէն եւ ոչ իսկ եղբորմէն, ու թաքուն պահուած է ցարդ անկիւն մը, իր ձեռագիր-ներու թղթածրարներուն մէջ...: Ս. Սիմոնեան տարակուսած է պահ-մը իրաւամբ անոր վաւերականութեան մասին, բայց հեղինակին դի-մը մէկ կողմէն, ստորագրութեան պէս յայտարարութիւն մը՝ միւս կողմէն գործին վերջը, յաջողած են հաստատելու անոր հարազա-տութիւնը: Ողբերգութեան վերջը կը կարդանք.

«Ես Պետրոս Դուրեան զողտրիկ քերթող մ'եմ,
որում «Տարագիր ի Սիպերիա»
ողբերգութիւն ի մի արարուած»:

Երբեակ սա տողերը եղական բան մը ունին իրենց մէջ, յիշատա-կարանի մը արձանագրութեան նմանող: Պատանի Դուրեան զուար-

ճացած կ'երեւի այդպիսի աւարտագրով մը կնքելու իր դործը, որուն յետոյ կարեւորութիւն տուած չէ: Սակայն, ինչպէս նկատել կու տայ հրատարակիչը, զայն բեմադրելու փորձ մը ըրած են ժամանակին, որովհետեւ «Անձինք»-ի առջեւ նշանակուած դերասաններու անունները փաստ են ատոր. այլաբանական դէմքեր կամ անձնաւորութիւններ ստեղծուած են Միքայէլ Նալպանտեանի շուրջ՝ որ միակ իրական դէմքն է հոն. Հայաստան, Սիպերիա, Ժամանակ, Մահ, Ազատութիւն կը կազմեն արձանային, անշարժ դործողութեան մը դերակատարները: Հոն նշանակուած պատասխանատու դերասաններն եղած են Պետրոս Աղամեան՝ անձնաւորելու Միքայէլ Նալպանտեանը, Վարդուհան՝ Հայաստանը, Պէնկլեան՝ Սիպերիան, Վարդան (?)՝ Ժամանակը, Տիգրան (Գալէմճեան?) Մահը, Օր. (կը պակսի անունը)՝ Ազատութիւնը:

Ս. Միմոնեանի յայտնութենէն առաջ դործը ծանօթ էր Յ. Օշականին, որ կը յիշէ զայն «Միքայէլ Նալպանտեան» խորագրով, հանդիպած ըլլալով Դուրեանի ձեռագիրներուն մէջ:

1891ին Մաքսուտ Միհրդատեանց Արմաշէն կը գրէ Ա. Չօպանեանին, ի դիմաց Եղիշէ Վրդ. Դուրեանի, որուն բազմազարդ կեանքը թոյլ չէ տուած առաջին նամակէն ետք զբաղիլ անձամբ Չօպանեանի յարուցած հարցադրոյցներով: Հոն այդ նամակին մէջ խօսուած է «Տարագիր ի Սիպերիա»-ի մասին, բայց տարտամ եւ կցկտուր արտայայտութեամբ, որպէս թէ դոյուրութիւն ունեցած է հին ձեռագիր մը, յետոյ փոխուած, վերջնական ձեւին վերածուած, եւ թէ՛ նախկին ձեւը աւելի աղէկ, ըստ իրեն¹⁰⁷: Անիմաստ եւ անորոշ տեղեկատուութիւն մը, որովհետեւ միակ ձեռագիրը, որ դոնուած է Միմոնեանէն, ամբողջութիւն մըն է մէկ արարով, եւ չունի ուրիշ օրինակ մը ո՛չ նախնական ձեւով եւ ոչ ալ նոյնին վերամշակում մը: Կամ Եղիշէ Դուրեան յստակ դադափար չունէր, եւ կամ Մաքսուտ Միհրդատեանց չէ կրցած թափանցել իրեն հաղորդուած մտքին:

Այժմ հրապարակի վրայ է Տարագիր ի Սիպերիա, հրատարակուած Ս. Միմոնեանէն¹⁰⁸ եւ Պետհրատէն¹⁰⁹: Համառօտ, բայց ամբողջական այլաբանութիւն մը՝ ուր ռոմանթիքը եւ դասականը մի-

անգամայն կը հայելանան: Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ գրուած է այս դործը, կոչուած իրմէ ողբերգութիւն: Տասնհինգ տարեկան տղու դործ, դպրոցականի խանդավառութենէ մը ծնած, մարմին տալու ժամանակի մտայնութեան, ապրումներուն, եղբերական մահուան առիթով Միքայէլ Նալպանտեանի, որ երգիչն էր ազատութեան «Հիւսիսափայլ»-ի էջերէն: Անոր կեանքին ողբերգութիւնը ցնցած էր երիտասարդութիւնը Կովկասի եւ Պոլսոյ: Ողբերգութիւնը դասական մտքով առնուած չէ հոս, այլ խորհրդանշական, իբր ողբի եւ սուգի աղաղակ մը, համաձայն դարուն հոգեբանութեան: Միակ իրական անձը Միքայէլ Նալպանտեանն է, միւս հինգերը այլաբանութիւններ են, երկու երկիրներ՝ Հայրենիքը (Հայաստան), աքսորավայրը (Սիպերիա), եւ կեանքը բաղկացնող կամ քայքայող տարրեր (Ազատութիւն, Ժամանակ եւ Մահ): Վերացական դադափարներ են, բանաստեղծական շունչով ջերմացած, առանց իմաստասիրական հանգամանք առնելու. ամէն ինչ զգացական մթնոլորտի մէջ մնացած է եւ դրականութեամբ միայն հասկնալի դարձած, որովհետեւ հեղինակը պատանի մըն է, գերդասինկ խառնուածքով, խոհուն մտքով, բայց ոչ հակամէտ իմաստասիրելու:

Նալպանտեան, թշուառ աքսորեալը, Սիպերիոյ սառնամանիքներու խորը կը հեծէ, երազելով հայրենի աշխարհը եւ ազատութիւն: Լուսաւոր էակ մը յանկարծ, հրապուրիչ եւ սիրելի՝ դէմը կ'ելլէ. Ազատութիւնն է, որուն համար ան կը պայքարի եւ զոր կ'երազէ իրեն համար, հայրենիքին համար. բայց տխուր իրականութիւնը կը ցնցէ իսկոյն զինքը. ցուրտ ու ահաբեկիչ Սիպերիան, բռնութեան եւ անդթութեան անձնաւորումը կը դերակշռէ վրան, եւ որուն կը յաջորդէ Մահուան պատկերը՝ որ կը հասնի իբր աստուածային հրաման, վերջ տալու անոր տառապանքին. Նալպանտեան կ'իյնայ անչունչ. դիակը մէջտեղն է, երբ Հայաստանի ոգին կը յայտնուի հոգիւնով, վանաւորելու համար կարծես զայն, եւ հուսկ կ'երեւի Ժամանակը, որ Հայաստանի հետ յուսադրիչ «տիպոկ» մը կ'ունենայ. յոյսի նըշոյլէն լուսաւորուած ապագայի մը հեռապատկերով կը փակուի այլաբանական տեսիլքը:

Եղական է այս դործը Դուրեանին, անմահ՝ միւսներուն: Գեղարուեստասէր պատանին տպաւորութեան տակ է դասական ճաշակներու, իր դպրոցական ընթերցումներուն: Այլաբանական այս պատկերացումը Փրանսական խորհրդապաշտներէն չի դար. այդ շարժումը չէր կրնար Պոլիս մտած ըլլալ 1885էն առաջ, շատ հաւանաբար իր մը չէր կրնար Պոլիս մտած ըլլալ 1885էն առաջ, շատ հաւանաբար իր ծագումէն չէր մը աւելի ուշ՝ ասոր ազդեցութեան հետքերը փնտռելու է: Հոս Դուրեան բացարձակապէս դասական պատկերաստեղծումներու դրութեան մէջ է. այնպէս՝ ինչպէս հիները կ'անձնաւորէին ներու դրութեան մէջ է. այնպէս՝ ինչպէս հիները կ'անձնաւորէին ներաւը, Մէրը, Մահը, Խուճապը, որոնցմով լի են դասական դրա-

107. Հմմտ. «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1968, թ. 1, էջ 146-147:

108. «Սփիւռք» շաբաթաթերթ, 1961, Գ. տարի, թ. 40-52, էջ 5-7:

109. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ, Երկերի ժողովածու, հտ. Բ., Երեւան, 1972, էջ 463-478: Երկու հրատարակութիւններն ալ, որ կը հիմնուին միեւնոյն ձեռագրին վրայ, ունին բազմաթիւ տրոհեր շեղատառ (արամեան գրով) տպուած. ասիկա կը նշանակէ՝ որ բնագրին մէջ հեղինակէն կամ բեմադրիչէն ջնջուած են ինչ ինչ տողեր, անշուշտ համառօտելու նպատակով: Աւելորդ բծախնդրութիւն մը եղած է տպագրութեան մէջ, ի սէր բնագրի հաւատարմութեան, արամեան գրերու խառնուրդը, որովհետեւ կը խանգարէ միայնութիւնը շաբաթաթերթին:

կանութեան էջերը եւ որոնց սկզբնաղբիւրը Հոմերոսն է. մեր պատանի բանաստեղծն ալ՝ երբ Աղատութեան, Հայրենիքի, Բռնութեան (Սիպերիոյ մէջ), Մահուան եւ Ժամանակի դաղափարները այլաբանեալ պատկերներու կը վերածէ, դասականներու մտայնութիւնն է որ կը կրկնէ, եւ ոչ երբեք սէմպոլիսքներու դրական արտայայտութեան: Այս վերջինները իրականութեան տեղ պատկերն ու ձեւը կը նախընտրէին, բայց ուրիշ եղանակով մ'արտայայտութեան, ուրիշ արուեստով մը, իրերու ետեւ խորհուրդ մը տեսնելով, տարտամ գոյներու վերարտադրութեամբ, կերպով մը հոգւոյն թաքուն, խորունկ եւ գրեթէ անդիտակից խօսքը: Ժամանակը խորհրդանշական պատկեր մըն է Դուրեանի քով, բայց իր խորքին մէջ աւելի անձ մը՝ որ կը խօսի, նմանապէս Ագատութիւնը, եւ Մահը, Հայրենիքն ու Սիպերիան, ու չեն ենթադրուած կողմերէն արտայայտութիւններ հեղինակին մէջ, այլ, ըսենք դարձեալ՝ անձնաւորումներ բոլորովին դասական ըմբռնումով եւ պարզութեամբ: Յայտնի բան է որ Դուրեան ատեն չէ ունեցած այդ անդրանիկ գործը յետոյ կատարելագործելու. ու թողած է, գրեթէ լքած, մոռցած նոյնիսկ անոր գոյութիւնը 1866էն ետք¹¹⁰, որ վերջընթեր տարին էր դպրոցականի կեանքին:

2. ՎԱՐԴ ԵՒ ՇՈՒՇԱՆ

Առաջին ամբողջական տոմարն է Դուրեանին, յղացուած իր «Թատրերգութիւն երգախառն ի չորս արարս», կրելով երկրորդ խորագիր մ'ալ Հովիւք Մասեաց: Զոյգ տիտղոսումները Ժամանակին սովորութեան յայտանիչ են եւ թերեւս ռոմանթիք շարժումի սկզբնաւորութեան հետ կապուած. յետոյ նիւթին բնական եւ ներքին յեղաշրջումը կը բացատրէ ինքնին խորագրին վրայ: Այսպէս է առ հասարակ իր քով եւ մեծ վարպետներէն ոմանց գործերուն մէջ, յիսնեակ մը եւ աւելի տարիներ զինքը կանխող շրջանի մտայնութեան մէջ:

Եթէ դրական արժանիք փնտռելը ընդունայն ճիշդ համարուի հոս, այս ողբերգական տոմարն մէջ, բայց ատոր հիւստեամբը տղու մը ե-

110. Այս թուականը ենթադրական է. հեղինակէն որեւէ ճշտում գոյութիւն չունի: Երկու կարելիութիւններ հետեւաբար կարելի է խորհիլ. կա՞մ Նալպանդեանի մահուան թարմ տպաւորութեան տակ գրուած է, 1866ին դարձան կամ նոյն տարւոյն ընթացքին, եւ կամ 1867ին, երբ իր մէջ գրական ճաշակը աւելի զարգացած էր, եւ բանաստեղծն ալ թեւակոխած էր իր 15րդ տարին (գնելով իր ծննդեան թուականը 1852ին): Ծննդեան թուականի մասին, ինչպէս ըսինք նախապէս, կարծիքները չեն համաձայնի իրարու. ոմանք կը համարին որ ծնած ըլլայ 1851ին, ուրիշներ 1852ին: Մենք կը հակինք երկրորդ կարծիքին, հիմնուած աւելի հաւանական փաստերուն վրայ:

րեւակայութենէն անդին անցնող իրականութիւն մըն է: Արկածախընդրական տաղնապներ, յուզական ապրումներ, սիրոյ առանցքի մը վրայ կառուցուած՝ գործողութեան մը ենթահողը կը կազմեն, արարուածէ արարուած, անշուշտ իրենց անխուսափելի թերութիւններով հանդերձ:

Թողած պահ մը այս նկատառումը՝ կեդրոնանալով նիւթին շուրջ, այնպէս՝ ինչպէս մտածուած ու յորինուած է պատանի թատերագրէն: Հոս ալ Դուրեան, ինչպէս յետոյ «Թշուառներ»ու մէջ, ինքնահայեցում մ'ունի, անդրադարձումով իր կեանքին, իր մտայնութեան, եւ ապրումներուն: Պատանի մը, որ ամէն բանէ աւելի աղքատութեան նուաստութիւններուն հետ զգացած է սիրոյ պակասը եւ ապրած տառապազին կամ չէ կրցած ապրիլ երազուած սիրոյ կեանք մը, բնականաբար պիտի ներշնչուէր անմիջականօրէն զինքը տպաւորող ու ժեղ իրականութենէ:

Իր սիրոյ ըմբռնումը ռոմանթիք դպրոցինն է, եւ այդ ըմբռնումին համաձայն է նաեւ արտայայտութիւնը. սէրը երջանկութիւն է, բայց նաեւ աղբիւր թշուառութեան: Վարդ եւ Շուշան գիրար կը սիրեն. Վարդ որդին է Պարէտ ագարակապետին, եւ Շուշան անոր որդեգրեալ հովուուհի մը: Գաղափարային եւ մաքուր սէր մը ջերմացուցած է երկու դեռատի սրտերը: Բայց չարութիւնը, մարդկային ախտը կը դաւաճանէ անոնց երջանկութեան: Սուրմակ՝ աւազակ մը, արդէն շատերու արինը մտած, որ սիրահարուած է Շուշանին: Գիշերային մութ ու լռին պահերը կը խորհի օգտադործել առեւանդելու զայն: Բեմին յարգարումը ռոմանթիք գոյնին եւ պահանջներուն մէջ է. դաշտավայր մը, գիշերային տեսարանով, հեռուն անտառ մը լուսնի լոյսով հազիւ լուսաւորուած, եւ հոն Սուրմակ՝ որ կը ծրագրէ իր դաւաճանութիւնը: Դուրեանի երեւակայութիւնը ստեղծած է ուրիշ անձեր ալ, գործողութիւնը շարժման դնելու համար. Գեղամ երիտասարդը, միամիտ սիրահար մը՝ որդի Սուրմակի եւ Մարիամի, լքուած հօրմէն եւ ոխերիմ թշնամի անոր, որովհետեւ ինքն ալ Շուշանի սէրէն տարուած է: Իսկ Մարիամ թշուառացած կին մը, երբեմն օրինաւոր կողակիցը Պարէտ ագարակապետին եւ մայր Վարդեմն օրինաւոր կողակիցը Պարէտ ագարակապետին եւ մայր Վարդին, բայց յափշտակուած Սուրմակէն եւ հեռացած տունէն՝ մուրհին, ինչպէս թշուառ մըն է իր բացկանուհի մըն է այժմ, եւ թշուառ, ինչպէս թշուառ մըն է իր միւս որդին Գեղամ, զոր ունեցած է Սուրմակէն: Սա ընկեր մ'ալ ունի, իր չար կամքին գործակատար, Տիրան, որուն յանձնած է Շուշանը հափափելու գործը:

Առաջին արարին մէջ այս հոգեբանական հետապնդումն է, որ տեղի կ'ունենայ. Շուշանին դէմ մէկ կողմէն լարուած է թակարդը Սուրմակէն, միւս կողմէն Գեղամ հոգեւին կը ցանկայ հանդիպիլ անոր, եւ Մարիամ կը շրջի փնտռելով իր զաւակները: Սա կը հանդիպի

րու տպագրութիւններ կը մատնեն իրենց ներկայութիւնը հոն. ազատութեան սէրէն զատ, նաեւ ահաւոր յոռետեսութիւն մը, նիւթապաշտներէն եկած արհամարհանք մը հանդէպ հոգեկանութեան, «ես»ի արժէքին, այսինքն մարդկային արժանապատուութեան դադարին, մարդկային ծնունդին: Կեանքը, բարութիւնը, հոգեկան արժէքները ատող Ֆրանցը՝ արտայայտութիւն մըն է ուրիշ կողմէ Շիլլէրի այդ մտայնութեան, ինչպէս ազատութեան սէրը Կարոլոսով: Ֆրանցի մէջ մարդկային ծնունդին սրբազնութիւնը, որ վերածուած է տոհմի եւ վախճանը՝ հողացումի, ժխտումն է բարոյախօսութեան, եւ արդիւնք՝ դադարաւորային այն ահաւոր պայքարին, որ իմաստասիրական բախումը ունեցաւ Շիլլէրի մէջ եւ իր օրերու գրականութենէն ներս:

Եթէ Շիլլէր չի հաւատար հոգեբանական փոփոխութեան մը, որով չարագործ մը կրնայ դառնալ եւ գրկել բարութիւնը, կորսուած խղճի մը նախկին երջանկութիւնը, Հիւկոյ զայն կարելի ըրած է Էն-Մանի-ի լուծման մէջ, երբ նոյնիսկ ոչ մէկ տրամադրութիւն կար դէպի այդ յանկարծական յեղաշրջումը: Ոճրագործ աւազակապետ մը եւ վատօրէն մեղկ ու արկածախնդիր թաղաւոր մը կը դադրին զիրար ատելէ: Անբնական է այս վերջը, բայց զայն կարելի ըրած է միայն բանաստեղծին կամքը, ուղեկով հոգեկան վսեմութիւն մը անձնաւորել կայսեր դադարաւորին մէջ:

Արդ, երբ կը վերադառնանք քննելու Վարդ եւ Շուշանը իր փոքրրկութեան մէջ եւ մանաւանդ իր լուծումը, որ այնքան բնական ու համակրելի է, 15 տարեկան տղու մը երեւակայութեան պտուղ, իր ողջմտութեամբ, հաւասարակշռութեամբ, զուսպ պարզութեամբ, մեր օտարամոլ ունայնամտութիւնը բախումի կը հանդիպի անշուշտ: Իմաստութիւնը՝ չափերու եւ պարագաներու նկատառումի մէջն է. Շիլլէրի ուժը, խիզախ շեշտը եւ ընդլայնելու առատագեղ յորդութիւնը չունի, հասկնալի պատճառներով մեր փոքրիկ Դուրեանը, բայց շնորհազուրկ մ'ալ չէ թատրոնի կառոյցը անտեսող, բեմական կարողութենէն տնանկ, ինչպէս ոմանք ուղեցին խորհիլ, հեռու առարկայական ըլլալու տրամադրութենէ:

Սիրոյ կեանքէն Դուրեան պիտի անցնի ընկերային եւ դասակարգային (իշխանական-ժողովրդական) հարցեր շօշափելու, զանոնք գործածելու իբր պայտմական ենթահող իր յաջորդ գործերուն մէջ. ընկերայինին հետ պիտի շօշափէ նաեւ ազգային-կրթական նպատակներ: Ժամանակին պահանջն էր մշակումը նման նիւթերու, նոյնիսկ երբ իրապաշտ հոսանքը սկսաւ իրմով մտնել մեր գրական ասպարէզը:

(Շար. 4)

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

ԴԱՆՏԷԻ «ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ»Ը

(Շար. Բագրավէպ, ք. 4, էջ 444-456)

ԴՐԱՆՏ. ԵՐԳ ԺԹ.

Երանելի հոգիներից կազմուած Արծիւը (արդարութեան խորհրդանիշը) խօսում է աստուածային արդարութեան անքննելիութեան եւ հաւատն ու գործերը զուգորդելու անհրաժեշտութեան մասին. ապա դատափետում է քրիստոնեայ թագաւորների յոռի աղաբեկները:

Իմ առջեւն էր, թեւերը լայն բացած արդ,
Պատկերն արծուի, որ կազմուած էր յիշեալ
Հոգւոց հոյից երանելի ու զուարթ:

4 Ամէն մէկը կարմիր յակիմք էր թւում,
Որտեղ ասես ցուֆն էր ընկած արեւի,
Եւ այդ ցուֆն իմ աչքերին էր զարնում:

7 Եւ այն, ինչ ես այժմ ուզում եմ պատկերել,
Ոչ մարդու միտքն է յղացել երբեւէ,
Ոչ ձայնն ասել, ոչ էլ թմամբն է գրել:

10 Ես տեսայ եւ լսեցի իսկ թէ ի՞նչպէս
Արծուի կըտուցն արտաբերեց «ես» եւ «իմ»,
Թէեւ մտքում «մեմք» եւ «մեր» էր իրապէս:

13 «Արդարութեան ու զրբութեանը համար, —
Սկսեց խօսել, — ես բարձրացայ այս փառքին,
Որին հասնել լոկ ցանկութեամբ չէ հրմար: